

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՔԷԼԵԱՆ (1)

Իմ յիշողութիւնները Արեւեանի վերաբերեալ սկսում են իմ ամենափոքր հասակից, 1888 թ., Շուշի քաղաքում, աննման Ղարաբաղում:

Ես բաղդ եմ ունեցել ծնուելու մի ընտանիքում, ուր մայրս չըջապատուած է եղել դրագէտներով, դերասաններով. այդ բոլորը շնորհիւ իմ հօրեղբորորդի Տիգրան Նազարեանին, խմբագիր հրատարակիչ «Աղբիւր» մանկական ամսաթերթի եւ «Տարազ» շաբաթաթերթի:

Ամենափոքր հասակից ես լսել եմ Գր. Արծրունու, Արասխանեանի, Ծիրվանզադէի, Յովհ. Յովհաննիսեանի, Սիմոն Հախումեանի, Բարախանեանի (Լէօ), Աղամեանի, Աստղիկի, Սիրանոյշի, Հրաչեայի անունները:

Սրանց լուսանկարներն են եղել մեր սենեակների պատերի զարդարանքը, մանաւանդ մօրս ննջարանին:

Հայրս յաճախ կը պատմէր, որ մայրս մինչեւ կէս գիշեր անկողին չէր մտնի, մինչեւ Աղամեանը չվերադառնար տուն Տիգրանի (Նազարեանի) հետ: Մայրս առանց բացառութեան յաճախել է բոլոր ներկայացումները եւ շատ դրաւում էր թատրոնով:

Երեւի այդ էր պատճառը, որ հէնց որ Ա-

րէլեանը գալիս էր Շուշի, իսկոյն գալիս էր մեզ մօտ: Յիշում եմ 1888 թ. եկաւ մեզ մօտ Արէլեանը եւ ասաց, որ սենեակ է վերցրել Անդրէասի մօտ: Այդ ժամանակ Շուշում միայն մի հիւրանոց կար, որը կոչուում էր Անդրէասի հիւրանոց: Եկել էր մեզ մօտ որ մօրս եւ եղբորս օգնութեամբ մի դահլիճ վերցնեն եւ սիրողներ դտնեն ներկայացում տալու համար: Այդ ժամանակ Շուշում դեռ թատրոնի չէնք չկար: Արէլեանը շատ էր շարչարւում, տանջւում, տանում էր ամէն մի գրկանք, բարկանում էր, տխրում, բայց ներկայացման օրը ամէն ինչ մոռանում էր:

Արէլեանի գալը մեծ տօն էր Շուշեցիների համար: Նրանք միմեանց ասում էին «Գնանք Արէլեանին», այսինքն՝ գնանք Արէլեանի ներկայացման: Արէլեանը ամառները յաճախ Շուշի էր գալիս: Նա սիրում էր Շուշին իր կարկաշատ հոս աղբիւրներով, իր վայրենի ժայռերով եւ անտառներով. ազատ ժամանակ ձիով գնում էինք պտտելու լեռները, նա զմայլում, հրճւում էր, երբ մտնում էինք «Հիւնտտ»ի անտառը, կամ «Թթու ջրի» կամ «Քարի տակ» կոչուած սառը աղբիւրները:

Ամառը կովկասի ամէն կողմից յողովուրդը գալիս էր Շուշի, ինչպէս ամառանոց: Գլխաւորապէս Բազուից եւ Տփլիսից: Արէլեանը գալիս էր Շուշի Աւետեանի, Պետրոսեանի, Մարի Հրանոյշի, Վարդիթերի, Մելիքեանի հետ եւ մի շարք ներկայացումներ էր տալիս: Ես բոլոր ժամանակ վազվզում էի նրանց հետ: Երբ մըտայ հայ ուսումնարան, նոյն տարին մեր ու-

1) Տիկին Բուդաղեան այս շահեկան գրքուածքը կարդաց Արէլեանի յիշատակին նուիրուած սգահանդէսին որ, դերասան Շահխաբունիի նախաձեռնութեամբ, 6-7 ամիս առաջ տեղի ունեցաւ Սօսիէթէ Սավանթի D սրահին մէջ եւ ուր խօսք առին նաեւ Շահխաբունի եւ Ա. Զօպանեան:

Մ. Խ.

սուցիչները ղեկավարութեամբ սկսեցինք մանկական ներկայացումներ տալ, յօգուտ մեր ազգատ ուսումնարանին:

Միւս տարին երբ Արէլեանը եկաւ Շուշի եւ խմացաւ, որ ես արդէն խաղում եմ մանկական խմբում, մօրս ասաց. «Տիկին Նաստաս, (մօրս անունը Անաստասիա էր բայց մտերիմները նրան Նաստաս էին անուանում), ոչոք է թողնէք որ Աննան մեզ հետ խաղայ»: Մայրս համաձայնուեց, ես ցատքեցի փաթաթուեցի Արէլեանին համբուրեցի եւ ցատքբրտում էի ուրախութիւնից. չէ՞ որ մի րան էր մանկական խմբում խաղալ, եւ մի րան էր մանաւանդ յայտնի, մեծ, հսկայ դերասան Արէլեանի հետ խաղալ: Առաջին անգամ Արէլեանի հետ խաղացի Աղղայի դերը «Ոճրագործի ընտանիք»ում (Ձիակոմետտի):

Այդ օրուանից ես ամէն անգամ մասնակցում էի Արէլեանի ներկայացումներին: Այսպէս տարիների ընթացքում Արէլեանը գալիս էր Շուշի ամառները եւ մի շարք ներկայացումներ էր տալիս: Չեմ մոռանայ, թէ ո՞րքան Շուշեցիները սիրում էին Արէլեանին, հիանում նրա խաղով եւ այնքան ողբերում, որ մի օր ճաշի ժամանակ իմ մտերիմ ընկերուհուս հայրը Նիկիտա Սանդամիրեանը ասաց. «Տե՛ս, Արէլեան, միւս տարի որ դաս, իմ սեփական թատրոնում կը խաղաս»: Արէլեանի աչքերը փայլեցին, ականջներին չէր հաւատում: Եւ իսկապէս Սանդամիրեանը կատարեց իր խօսքը եւ Շուշում կառուցեց թատրոն: Միւս տարի Արէլեան եկաւ Պետրոսեանի հետ եւ խաղացին «Արքայ Լիր»: Այդ օրը շատ խորը տպւորուել է իմ յիշողութեան մէջ: Երեկոյեան ժամը ճին Ռուսաց զինուորների երաժշտական խումբը սկսեց թատրոնի պատուհանների տակ փողոցում նուագել: Ժողովուրդը գլխապատառ խմբով վազում էր թատրոն տոմսակ գնելու եւ տեղ գտնելու:

Ներկայացումը անցաւ շատ լաւ. Արէլեանը եւ Պետրոսեանը հրաշալիօրէն տարան իրանց դերերը: Անվերջ ծափահարութիւններ, գոռոց գոչում, գլխարկներ բեմ նետել, կանայք զմայլում, հիացած էին... Իսկ ես հպարտ եւ երջանիկ, որ միշտ Արէլեանի հետ էի:

Մի ամառ Արէլեանը եկաւ Շուշի բոլորովին մինակ. եկաւ մեզ մօտ, որ եղբայրս նրա համար ձեռնհաս սիրողներ գտնէ: Նա եղբորս Հմայեակին շատ էր սիրում եւ հաւատ ընծայում, միշտ նրան էր յանձնում կարգադրութիւնը թէ՛ տոմսերի եւ թէ՛ դրամարկղի: Եղբայրս եւ իր մտերիմ ընկեր Տիգրան Բէկղաղեանը մասնակցում էին Արէլեանի գրեթէ բոլոր ներկայացումներին: Յետոյ մենք տեղափոխուեցինք Բագու, մի երկու տարուց էլ յետոյ Պետերբուրգ, ուր սովորում էի գիմնազիայում եւ ուր 1884 թ. կորցրինք մօրս 38 տարեկան հասակում: Բազմաթիւ հեռագիրներից ամենասրտառուչը եւ զգայունը Արէլեանի հեռագիրն էր:

Երբ 1903 թ. արտասահմանից (ուր ես ուսանում էի) արդէն ամուսնացած վերադարձանք Բագու, ես բազմ ունեցայ ծանօթանալու Հրաչեայի հետ: Յաւ ի սիրտ պիտի ասեմ, որ ես չեմ տեսել բեմի վրայ ոչ Աղամեանին, ոչ Աստղիկին, ոչ Հրաչեային: Այս վերջինս արդէն այդ ժամանակ քաշուած էր բեմից, ձայնը կտրած լինելու պատճառով. բայց սարսափելի տանջւում, այրւում էր բեմի սիրով: Մի օր Շիրվանդադէն ասաց. «Քեզ պիտի ծանօթացնեմ մի զարգացած արուեստագէտ տիկնոջ հետ, այն է տիկ. Իւզրաչեանի, նա նոյնպէս սիրում է բեմը, ինչպէս եւ դու, եւ դուք միասին պիտի աշխատէք Հրաչեայի հետ»: Նոյն օրը ծանօթացայ տիկին Իւզրաչեանի հետ եւ միւս օրը մենք արդէն Հրաչեայի մօտ էինք, որը մեզ ընդունեց գրկաբաց: Նա շատ էր լսել մեր երկուսի մասին Արէլեանից եւ Շիրվանդադէից: Հրաչեան մեզ բացատրեց, որ ուզում էր մեր մասնակցութեամբ եւ իր բեմի սէօրութեամբ մի փոքրիկ դրամատիկ խումբ կազմել ներկայացումներ տալու համար, որ գտնէ այդպիսով յազնեղ իր բեմի ծարաւը: Մենք ուրախութեամբ ընդունեցինք նրա առաջարկը եւ երկու օրից Հրաչեայի բնակարանում արդէն փորձեր էինք անում: Գլխաւոր դերերը պիտի կատարէր Արէլեանը: Երբ մենք պիէսը բոլորովին պատրաստած էինք լինում, Արէլեանը Տիփիսից մի երկու օրով գալիս էր, նրա հետ էլ գիշեր ցերեկ փորձում էինք եւ ներկայացումներ տալիս կամ

Թաղիների թատրոնում, կամ Նիկիտինի կրկեսում: Բազու այդ ժամանակ հայ թատրոնի չկար, Թաղիների թատրոնում ամէն օր Ռուսներն էին խաղում, իսկ Հայերը թափառում էին կրկէսից ակումբի դահլիճը, ուր ոչ մի յարմարութիւն չկար. Արէլեանը քանիցս բեմից ազատ էր, պաղատել է Հայերին որ մի շէնք կառուցեն յատուկ հայ թատրոնի համար. աւա՛ղ, նրա այդ իղձը գրեթէ չկատարուեց, որովհետեւ նոյնիսկ յետագայում եղբ. Մայիլեանների կառուցած թատրոնում ամէն օր Ռուսաց խումբն էր խաղում եւ շատ քիչ անգամ Հայոց խումբը:

Հրաշխայի հետ մեր ներկայացումները շարունակուեցին մինչեւ 1905 թ.: Հիւանդութեան պատճառով նա ստիպուած եղաւ վերջնականապէս հրաժարուել թատրոնական գործունէութիւնից. ահա հէնց այդ ժամանակներն էր, երբ մենք առաջին անգամ բեմ հրաւիրեցինք փայլուն երիտասարդ Աշօ Շահխաթունուն, Ոսկանեանին եւ Օր. Պիրպուղաղեանին, այժմեան Արմէն Օհանեանը: Քիչ ժամանակից յետոյ, յայտնի ազգասէր ճարտարապետ Կոստանդին Պատիսեանը հիմնեց Բազուայ Կուլտուրական Միութիւնը, որի թատրոնական մասնաճիւղը անցաւ մեր ձեռքը եւ մենք հիմնուած օրից մինչեւ 1916 թ. անկախ աշխատեցինք: Իսկոյն սկսեցինք փող ժողովել, եթէ չեմ սխալւում մօտ 10,000 ռուբլի, վարձեցինք Նիկիտինի Կրկէսը եւ հրաւիրեցինք Տիխիսից մեր ամենալաւ դերասանները, Միրանոյշ, Արէլեան, Շահխաթունի, Չարիֆեան, Ալիխանեան, Մայսուրեան, Աղամեան, Սաթենիկ, Աւետեան, Փափազեան, Ոսկանեաններ, Արմէնեաններ, Մանուէլեան, Լաքա, Ղազարեան, Աղեան, Օլի Ահարոնեան, Քնարիկ, Գուլաղեան, Չարէլ Փառանձեմ, Սեւումեան, Վրոյր, Թաշչեան, Յարութիւնեան, Անդրանիկ, Կոստանեան եւ շատ ուրիշ դերասաններ:

Անթիւ եւ Արէլեանի ստեղծագործած տիպերը. նրա Գիթ Դանիէլը, Ֆլամբօն, Օթարբէկը, Նիկեփորը, Դոկտ. Շտոկմանը, էլիզբարովը, Միրզէկի Յովսէփը, Բարխուդարը, Սըվինդալին, Արքայ Լիբը, Վայնուշինը, Նեղնամովը, Կորրադոն, Անդրէասը եւ այլ շատ տիպերը երբեք չեն կարող մոռանալ նրանք, որոնք

բազղ եւ ունեցել նրան տեսնելու: Յիշում եմ Արէլեանի յորելեանը որ շատ փառահեղ կատարեցինք: Բացի հայ բոլոր կազմակերպութիւնների ներկայացուցիչներից, բեմի վրայ ներկայ էին Ռուսաց, Վրաց եւ թուրք ազգի ներկայացուցիչները, որոնք Արէլեանի տաղանդը մինչեւ երկինք բարձրացրին, նրան Կովկասի թատրոնի ուսուցչապետ անուանելով: Թուրքերը նրան «Գարդաշ» էին ասում: Այդ երեկոյ Արէլեանը զգածուեց, նոյն իսկ արտասուեց, որովհետեւ նա տեսաւ եւ զգաց ժողովուրդի սէրը: Ի պատիւ Բազուայ հայ հասարակութեան՝ պիտի ասեմ, որ շատ մեծ դուժար հաւաքեցինք Արէլեանին նուէր: Արէլեան անշուշտ կովկասահայ թատրոնի անասան գլխաւոր սիւնն էր, նրա բնածին տաղանդը, նրա ներքին ապրումները անկարելի է հերքել: Յիշում եմ, ի՛նչպէս 1915 թ. Արէլեանը եւ Մայսուրեանը մեզ մօտ խմբումն էին, Մայսուրեանի ի նպաստ խաղացին «Վերա Միրցէեա». Արէլեանը այնքան սրտառուէ, այնքան խոր զգացումով խաղաց Միրցէեաի ամուսնու դերը, որ ներկայ գտնուող Ռուսները, որոնք յատուկ եկել էին Արէլեանին տեսնելու այդ դերի մէջ, հիացած եւ ապշած հեռացան թատրոնից: Այդ տարին այդ պիէսը շատ մեծ յաջողութիւն էր գտել Ռուսաց բեմի վրայ եւ մամուլը շատ էր խօսում:

Արէլեանը շատ մեծ արտիստ էր բառիս բուն նշանակութեամբ եւ միեւնոյն ժամանակ շատ համեստ: Յիշում եմ, ինչպէս 1916 թ. երբ բեմադրում էինք առաջին անգամ Լ. Շանթի «Վայսր»ը եւ երբ Արէլեանին յանձնեցի Նիկեփոր կայսրի դերը (Կուլտուրականի թատերակ. սեկցիայում դերարաշխութիւնը ինձ էր յանձնուած), ասացի՝ «Արէլեան, ե՛կ մեզ մօտ, միասին ուսումնասիրելու Նիկեփորի դերը. գնել եմ ռուսերէն Շարլ Տիլի «Բիւզանդական Տիպեր»ը եւ «Բիւզանդական Պատմութիւնը»: Նա ասաց՝ «Լա՛ւ, հէնց այսօր կը գամ» եւ իսկապէս նոյն օրն եկաւ: Եւ մենք մի հինգ – վեց օր քրքրեցինք, ուսումնասիրեցինք Նիկեփոր կայսրի եւ նրա պալատականների կենցաղը: Երկար, բաւականին երկար պատրաստեցինք այդ պիէսը ներկայացման համար. Մայիլեան մեծ թատրոնի մէկ քառորդը Ռուսներ էին լցրել, այնտեղ էլ Բազուայ Ռուսաց թատերա-

կան խումբը ին գորպորէ իր դիրեկտոր Պ. Պօլօնսկու հետ, ինչպէս եւ շատ թատերասէր Ռուսներ. թատրոնը լեւի լեցուն էր: Ներկայացումը անցաւ շատ յաջող: Արէլեանը դերազանցեց իրան: Ռուսներն եկան բեմ, նրան շնորհաւորեցին եւ անվերջ ծափահարութիւններով նրան ճանապարհեցին տուն: Մի քանի օր քաղաքում այդ մասին էին խօսում:

Արէլեանի տաղանդը անվիճելի էր: Նա ստեղծադորձող ուժ էր, աստուածային կայծ կար նրա մէջ, եւ այդ կայծը նրա հանճարը վառ պահեց մինչեւ վերջը: Մեր վերջին տեսակցութիւնը կովկասում Արէլեանի հետ եղաւ Տիֆլիս՝ ամառը, ուր ամուսինս, մի արտիստական բացօթեայ ճաշկերոյթ սարքեց ի պատիւ հայ գրողների եւ դերասանների: Ներկայ էին Յովհաննէս Թումանեան, Շիրվանզադէ, Տիգրան Նազարեան, Մակինցեան, Տէրեան, Զապէլ Եսայեան, Արէլեան, Շահխաթունի, Ալիխանեան, Աւետեան, Յարութիւնեան եւ բոլոր միւս դերասաններն ու գրողները: Միաձայն ընտրուեցին Յովհ. Թումանեանը «Թամատա» եւ Արէլեանը նրա օգնականը: Արէլեանը ոչ միայն հանճարեղ դերասան էր, այլ եւ հանճարեղ սեղանակից - խօսակից: Թումանեան եւ Արէլեան այնքան համութիւն ցոյց տուին այդ ճաշկերոյթին, որ ժամը ցերեկուայ 12ից մինչեւ գիշերուայ 12ը ոչ ոք չէր մտածում տուն գնալու: Արէլեան անվերջ պատմութիւններ, անվերջ սրամտութիւններ էր անում ամէն մի «կենաց» ի վրայ՝ իրան յատուկ հիւմուրով: Ո՞վ կարող է մոտանալ Արէլեանի պատմութեանը. — «Աձամ, քրցամ», կամ «Ա՛ գեաղա, մի կուպէկ մայակ ե՞ս գրել»:

1921 թ. Բերլին Գրինֆիլտի մօտ եւ ծանօթացայ մի քանի Հայուհիների հետ, երկար խօսակցութիւններից յետոյ վճռեցինք հայ կանանց անկուսակցական ակումբ բանալ Բերլին. այդ վճիռը մենք իրականացրինք, արդէն մտածում էինք մի քանի օրից տօնել բացումը, երբ յանկարծ մի օր Արէլեանը, կինը եւ աղջիկը Զմիւռնիայից եկան մեզ մօտ: Այդ ճիշդ Զմիւռնիայի հրգեհից յետոյ էր, ուր Արէլեանը կորցրել էր ամէն ինչ, բացի ինչ որ մեզ Հայերիս համար ամենաթանկագինն եւ անսխալագինն էր — իր կեանքը: Նա շատ ընկճուած, շատ ճնշուած էր, դարձաւ ինձ եւ ասաց. «Աննա ջան, հիմա յոյսս դու ես, շուտ օգնութեան հասիր, թէ չէ՝ ցուրտ է, վերարկու, տաք հագուստ չունենք, ո՛չ Օլիան ո՛չ Մայրիկը եւ ոչ էլ ես»: Այդ բոպէին մեզ մօտ էր եւ Տիգրան Նազարեանը, եւ միւսները բոլորն սկսեցին նրան քաջալերել, իսկ ես իսկոյն հեռախօսով մեր ակումբի անդամներին միւս օրը ժողովի հրաւիրեցի (ակումբի նախագահ ինձ էին ընտրել), եւ ժողովին յայանեցի որ Արէլեան եկել է առանց միջոցների, շատ նեղ վիճակի մէջ է, եւ ահա ես առաջարկում եմ մեր անկուսակցական ակումբի բացումը կատարել ի պատիւ Արէլեանին, այդ առիթով շուտափոյթ տոմսակ ծախել ձեռքի վրայ եւ ամբողջ դուժարը նրան յատկացնել: Անդամները միաձայն համաձայնուեցին եւ 4-5 օրում մի այնքան մեծ դումար ժողովեցինք, որ նոյն իսկ վերջին նիստում անդամներից շատերը դանում էին, որ անխառն է այդքան մեծ դումար մի մարդու յատկացնել, քանի որ մի մասը կարելի էր տալ ուրիշ հայ կարօտեաների: Պատասխանեցի, որ Արէլեանը այժմեայ հայ իրականութեան մէջ մեր ամենամեծ դերասանն է, այդ դումարը հաւաքուել է նրա անունով եւ պէտք է նրան էլ տրուի: Բերլինի մեր ակումբի բացումը անցաւ շատ յաջող. իսկապէս դահլիճը լցրել էին ամենաձայնալից ձախակողմեաններից սկսած մինչեւ ամենաաջակողմեանները:

Արէլեանին բարձրացրի բեմ, բուն ծափահարութիւնների տակ: Այդ օրը Արէլեանի հետ եւ վերջին անգամ բեմ բարձրացայ: Նա պատմեց մի առ մի իր գլխի եկած պատուհասները, իսկ ես ասացի բացման խօսք եւ մեր անկուսակցական ակումբի նպատակն ու նրա ձգտումը: Մինչեւ կէս գիշեր ժողովուրդը չէր ուզում ցրուել: Ի հարկէ՝ ամբողջ դումարը յանձնեցինք Արէլեանին: Միւս օրը նա եկաւ մեզ մօտ եւ ասաց. «Աննա ջան, ե՛կ առաջուայ պէս ինձ հետ խաղա՛, մի խումբ կազմենք եւ մի - երկու ներկայացում տանք»: Ասացի. «Մի-րելի Արէլեան, ես արդէն ձերացել եմ բեմի համար, իսկ Բերլին շտապով դժուար է լաւ խումբ կազմել»: Նա մի քիչ վերաւորուեց: Մի

երկու օր չեկաւ մեզ մօտ: Յետոյ ինքը վճուեց խողալ «Յթէլլօ», Գերմանացի դերասանների չեա: «Յթէլլօ»ին ներկայ էին բազմաթիւ Գերմանացիներ եւ նրանց բոլոր յայտնի քննադատները: «Յթէլլօ»յից յետոյ նա անցաւ Փարիզ: Երբ մենք եկանք Փարիզ, Արէլեանը արդէն մեկնել էր Ամերիկա: Ամերիկայից վերադարձին եկաւ իսկոյն մեզ մօտ: Նա ի միջի այլոց շատ ուրախ էր, որ ես ամուսնացել եմ իրա հայրենակից Շամախեցի Տիգրան Բուզաղեանի չեա: Ինչպէս գիտէք, Արէլեանը եւ Շիրվանդադէն նոյնպէս Շամախեցիներ են եւ երկուքով զաւակներ: Արէլեանը շատ զուարթ էր, թարմ, երջանիկ էր եւ ուրախ որ գնում էր հայրենիք. նա ասաց. «Աննա՛ ջան, հայ պետական թատրոն ունենք այժմս. աղջի՛, գիտե՞ս ի՞նչ ասել է մեզ համար հայ պետական թատրոն ունենալը. էլ վերջացան հայ դերասանների տանջանքները...»: Նա ինձ հրաւիրեց միւս օրը իրենց մօտ, ուզում էր ծանօթացնել իր սիրած փեսայի Մնար Մնարեանի չեա: Ես միւս օրը գնացի նրանց մօտ, այնտեղ էր եւ Օրիորդ Շիրվանդադէն, երկար խօսեցինք, պատմեցին Ամերիկայից. քանիցս ուզում էի գնալ տուն, չէր թողնում, պնդում էր որ էլի մնամ եւ վերջն էլ ասաց. «Սպասի՛ր, ես անձամբ քեզ պիտի

տուն ճանապարհեմ»: Ասացի՛ «Չէ՛, Արէլեան, չարժէ, չեմ վախենում, ես միշտ Փարիզում մենակ եմ ման գալիս»: Նա ասաց՝ «Չէ՛, ուզում եմ քեզ սիրտս բանամ»: Ճանապարհին նա ասաց՝ «Լսի՛ր, քեզ մի բան ասեմ, այժմս ես կարող եմ հանդիստ մեռնել, որովհետեւ ես երկու իղձ ունէի, մէկը՝ տեսնել մեր հայ պետական թատրոնը, միւսը՝ իմ Մաքրիկի, աննման Մաքրիկի բաղդաւորութիւնը: Տեսա՞ր ի՞նչ լաւ տղայ է Մնարը, շատ ուրախ եմ եւ հանդիստ, որ Մաքրիկը նրան է ընտրել: Հիմա ամբողջ ընտանիքով երջանիկ ու բաղդաւոր գնում ենք մեր աննման Հայրենիքը: Կը տեսնեմ նորից իմ սիրելի ժողովուրդը»: Յետոյ յիշեց իր երիտասարդութիւնը, Շուշին, անցած դացած լաւ եւ վատ օրերը, հասանք մեր բնակարանը. արդէն բաւական ուշ էր. շատ յուզուած բաժանուեցինք:

Մի քանի օրից Արէլեանը իր ընտանիքով մեկնեց Կովկաս:

Մեր վերջին 50 տարուայ թատերական վերածնունդի մարմնացումը, յաղթական պսակով հայ բեմի ողջակէզ Արէլեանը, այլ եւս չկայ...: Հանգի՛ստ նրա ոսկորներին:

Փարիզ

ԱՆՆԱ ԲՈՒԿԱՂԵԱՆ